ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 19. Լիցենզավորման ենթակա կամ թույլտվություններով գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը
(վերնագիրը լրաց. 10.12.21 ՀՕ-378-Ն)

Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1. ԱՌԵՎՏՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ
(բաժինն ուժը կորցրել է 27.10.17 ՀՕ-171-Ն)

2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2.1	դեղերի արտադրության համար՝ տարեկան	բազային տուրքի 200-ապատիկի չափով
2.2	***(ենթակետն ուժը կորցրել է 22.02.07 ՀՕ-117-Ն)***	
2.3	***(ենթակետն ուժը կորցրել է 22.02.07 ՀՕ-117-Ն)***	
2.4	դեղատնային գործունեության համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով
2.5	բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով
2.6	***(ենթակետն ուժը կորցրել է 25.10.17 ՀՕ-160-Ն)***	
2.7	***(ենթակետն ուժը կորցրել է 19.06.13 ՀՕ-85-Ն)***	
2.7[1].	***(ենթակետն ուժը կորցրել է 19.06.13 ՀՕ-85-Ն)***	
2.8	շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիր ստանալու համար՝	
	ա) ավագ բուժաշխատողի համար՝	բազային տուրքի եռապատիկի չափով
	բ) միջին բուժաշխատողի համար՝	բազային տուրքի չափով
2.8.1	Բուժաշխատողի անհատական լիցենզիա ստանալու համար (բացառությամբ	բազային տուրքի տասնհինգապատիկի չափով.

	Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, Ազգային անվտանգության ծառայության, ՀՀ ներքին գործերի նախարարության ենթակայությամբ գործող Ոստիկանության և Փրկարար ծառայության զինվորական հաստիք զբաղեցնող ավագ բուժաշխատողների)՝	
2.8.2	Անցումային անհատական լիցենզիա ստանալու համար (բացառությամբ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի բարձրագույն հետբուհական հաստատությունում ուսումնառողների)՝	բազային տուրքի հնգապատիկի չափով.
2.8.3.	2.8.1–րդ կետում նշված լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման համար գանձվում է նույն չափով պետական տուրք, որը նախատեսված է տվյալ լիցենզիայի համար (բացառությամբ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, Ազգային անվտանգության ծառայության, ՀՀ ներքին գործերի նախարարության ենթակայությամբ գործող Ոստիկանության և Փրկարար ծառայության զինվորական հաստիք զբաղեցնող ավագ բուժաշխատողների):	
2.9.	դեղերի մեծածախ իրացում	տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով
2.10.	Բժշկական արտադրատեսակի պետական գրանցման համար	բազային տուրքի 40-ապատիկի չափով